

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՅՈՆՋՅԱՆԻ
(1932—1989)

1989 թ. սեպտեմբերի 29-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Տ. Հայկազուն ավգ. քհն. Գյոնջյանը:

Հանգուցյալը (ավազանի անունով՝ Հարություն) ծնվել է Ալեքսանդրիա քաղաքում (Եգիպտոս):

1938—1944 թթ. ուսանել և սկզբնական կրթությունը ստացել է Մխիթարյան վարժարանում, հետո շարունակել է տեղի Ս. Գաբրիել և ապա Ս. Մարկոս գոլեջներում. և 1947 թվականի սեպտեմբերին ներգաղթել է Մայր Հայաստան և մշտական բնակություն հաստատել Լենինական քաղաքում:

Հանգուցյալը տասը տարի (մինչև 1957 թվական) աշխատել է տեքստիլ ֆաբրիկայում, միաժամանակ ծառայելով Լենինականի Ս. Աստվածածին կամ Ս. Յոթվիրաց եկեղեցում:

1959 թվականի հունիսի 7-ին, ձեռամբ երջանկահիշատակ Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամյանի, ձեռնադրվում է որպես ամուսնացյալ քահանա և մինչև իր կյանքի վերջը ծառայում նույն Ս. Աստվածածին եկեղեցում՝ դրսևորելով իրեն որպես բարեհոգի և ազգին, եկեղեցուն և հայրենիքին նվիրված մի անձ:

1976 թ., միջնորդությամբ Շիրակի թեմի առաջնորդ գերաշ. Տ. Նարեկ եպիսկոպոսի, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արժանանում է լանջախաչ կրելու իրավունքի, իսկ երեք տարի անց Տ. Հայկազուն քահանան ստանում է նաև ծաղկյա փիլոն կրելու իրավունք:

1981 թվականի հոկտեմբերին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոսը դարձյալ միջնորդագիր է ուղարկում Ս. Էջմիածին և Վեհափառ Հայրապետի օրհ-

նությամբ Հայկազուն քահանային արժանացնում ավագ քահանայի պատվավոր աստիճանին:

1982 թվականից Տ. Հայկազուն ավգ. քահանայի առողջությունը վատանում է, իսկ 1988 թվականի դեկտեմբերյան ահավոր երկրաշարժը կրկնակիորեն խորացնում է սրտի հիվանդությունը, որից հետո, 1989 թ. սեպտեմբերի 29-ին, վախճանվում է:

1989 թվականի հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Լենինականի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի և ս. պատարագի մատուցմամբ, կատարվեց հանգուցյալ Տեր Հոր վերջին օծման կարգը:

Հանգուցյալ Տեր Հայկազուն ավգ. քահանայի մարմինը թաղվում է քաղաքի Երկրորդ գերեզմանատանը՝ ընտանեկան դամբարանում:

Երկնային խաղաղություն հանգուցյալ Տեր Հոր հոգուն. ամեն: